

• Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն •

ԳՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ: - Հ. Մանանդեան: -
Հատոր Բ., մաս Ա.: Լաքալագլ, ու-
թածալ, էջ 462, Երևան, 1957: Գին՝
17 ռուբլի 20 կոպեկ:

Մեծարժեք գործ մըն է որ կը տրուի
մեզի, լաւ թուղթով եւ տպագրութեամբ:
Յառաջարանի տեղ « Խմբագրութեան
կողմից » կարճ զեկոյց մը կայ: Կըսուի
թէ Մանանդեանի մտադրութիւնն էր
սկզբնաղբերներու վրայ հիմնուելով՝ դը-
րել քննական Հայոց պատմութիւն մը,
Քրիստոսէ առաջ Զ. դարէն մինչեւ Քրիս-
տոսի ԺԶ. դարը:

1952ին արդէն հրատարակուեցաւ ԺԱ. -
ԺԶ. դարերու պատմութիւնը (գոր զրախո-
սեցի այս էջերուն մէջ): Այժմ կը հրա-
տարակուի Ա.-Ե. դար Քրիստոսի: Այս-
պէսով վաստակաւոր գիտնականին այս
գործը երկու հատորներով՝ յետ մահու
հրատարակութիւն են: Հատոր Բ., մասն
Բ., որ պիտի պարփակէր հրատարակուած
երկու հատորներուն միջեւ եղած ժամանա-
կամիջոցը, այսինքն Ե. դարէն ԺԱ. դար,
գծախտաբար հեղինակը չէ կրցած խմբ-
բագրել, թէեւ բաւականաչափ նիւթեր
հաւաքեր է այդ մասին:

Այս հրատարակուած հատորը իր խմբ-
բագրութեան ձեւով՝ շատ աւելի նպատա-
կայարմար է, քան թէ նախորդ հրատա-
րակուած հատորը: Մանանդեան թէեւ այս
հատորին մէջ ալ ունի վիճաբանելի կէ-
տեր, սակայն ընդհանրապէս իր աշխա-
տութիւնը աւելի ընդհանուր քննական տե-
սութիւն մըն է Հայ Ժողովուրդի մասին,
քան թէ նախորդ հատորը:

Մանանդեան իր այս հատորով կարեւոր
նպատակ մը կը բերէ Հայ Արշակունիներու
ժամանակագրութեան:

Մանր գիտողութիւն մը ընելով, մատ-
նանչեմ էջ 24, ուր Մանանդեան կը գրէ,
« Էլեգիայում (էրզրումի մօտ գտնուող

այժմեան Իլիջայում) »: Էլեգիա՝ Իլիջան
չէ, այլ հին Եկեղեցացը (Գաւառ): Դիտո-
ղութիւններ կարելի է ընել նաեւ Հայոց
քրիստոնէութիւն ընդունելու թուականին
մասին: Խնդրական է իր կարծիքը փաւը-
տոսի, Մովսէս Խորենացիի մասին: Իրա-
ւամբ դիտել կու տայ, որ « Փաւստոսի
Պատմութիւնը, որ մեծ մասամբ վի-
պական-բանաստեղծական գրուածք է,
պէտք է գործածել իբրեւ չորրորդ դարի
պատմութեան աղբիւր ամենամեծ զգուշա-
ւորութեամբ » (էջ 199): Այլուր ինքս ալ
ըսած եմ որ Փաւստոսի պատմութիւնը
պատմա - բարոյական պատմութեան
հաւաքածոյ մըն է, անտարակուսելի կեր-
պով Դ. դարէն, որ հաւանաբար Գրեթե
զիւտէն վերջ, նոր գիրքով գրուած ա-
տեն ենթարկուեցաւ թեթեւ արագրու-
թեանց: Փաւստոսը կարելի է գործածել
իբր հարազատ խտացում ժամանակուան
մտայնութեան, բարոյական խտացմանց,
ազգային բարոյական, որոնց մէջ կան
պատմական հիմեր, որոնք սակայն կա-
րելի է գործածել միայն այն առիթով, երբ
ուրիշ աղբիւրներ ալ կը համապատասխա-
նեն: Նոյնը կարելի է ըսել Աղաթանգեղո-
սի մասին, սակայն Խորենացիի պատմիչ
իսկ է անտարակուսելի, եւ Ե. դարէն, որ
կրնայ իր պատմութեան եւ ժամանակա-
գրութեան մէջ սխալիլ երբեմն:

Մանանդեան, էջ 200, կը հաւատայ Փա-
ւստոսի յիշատակութեանց՝ թէ Ծաղուհ
Բ. պարսից 368-9 թուականին Հայաստա-
նէն տարաւ մեծագանդուած հրեայ գաղ-
թականութիւն: Արտաշատէն 9,000 հրեայ
եւ 40,000 հայ տուն, կամ Երուանդաշա-
տէն 30,000 տուն հրեայ եւ 20,000 տուն
հայ, եւն: Արտաշատէն ուրեմն տարուած
կ'ըլլայ 50,000 տուն, Երուանդաշատէն
դարձեալ 50,000 տուն: Ասոնք անշուշտ
այդ քաղաքներուն բոլոր բնակչութիւնը
չէին կազմեր: Սակայն 50,000 տուն բաղ-
մանդամ հայ կամ հրեայ ընտանիքի հա-
մար առնուազն 6 հոգի հաշուելով՝ կ'ու-
նենանք 300,000 հոգի իւրաքանչիւր քա-
ղաքէ: Նման բազմութիւն երեւակայել

որեւէ հայաքաղաքի մէջ՝ կարելիութեան
սահմանէն դուրս է եւ խիստ անհաւանա-
կան: Հայաստանի քանի մը քաղաքներէն
տարուած լոկ հրեաներու թիւը, ըստ Փա-
ւստոսի, կը հասնի 114,000 տան կամ մօ-
տաւորապէս 680,000 անձի: Նման խոշոր
հրեայ գանդուածներու գոյութիւնը Հա-
յաստանի մէջ անձանթ կը մնայ հրէից
պատմութեան մէջ: Յիշեալ հայաքաղաք-
ներուն մէջ յիշուած թիւերով մեծագանդ-
ուած բնակչութիւն բոլորովին անհաւա-
նական է եւ քաղաքներու սահմաններուն
ծանօթութեամբ վրնանք ըսել անկարելի:
Հայաքաղաքներու մէջ հրեայ խոշոր կամ
նոյնիսկ համեմատ գաղթականութեանց գո-
յութիւնը երբեք չի յիշուիր այս բնա-
գաղթէն վերջ, եւ ոչ ալ որեւէ արձանա-
գրութիւն, յիշատակարան, չենք կամ նը-
ման տուեալ գտնուած է, ցոյց տալու որ
նկատելի հրեայ գաղութներ գոյութիւն
ունեցած ըլլան Հայաստանի պատմական
սահմաններուն մէջ: Գալով 114,000 հրե-
այ եւ 80,000 հայ տան, որոնց միացեալ
բոնագաղթը առնուազն 1,200,000 անձ
պիտի ընէր, գաղթել տալ Հայաստանէն՝
ձեռնարկ մըն է, որ իրադրութիւն կա-
րողութիւն չէր կրնար ունենալ Պարսից
բանակը: Մեզի ծանօթ Ծահ Արաւ Մեծի
բոնագաղթը՝ տասանորդեալ միայն՝ յա-
ջողեցաւ, քանի որ բոնագաղթէն վերջ
մեծ գանդուածներ դարձեալ պահեցին ի-
րենց գոյութիւնը բոնագաղթեալ վայրե-
րէն, եւ միայն Հին Ջուղան իր պարսից
սահմանին խիստ մօտ ըլլալուն պատճա-
ռաւ գրեթէ ամբողջապէս փոխադրուե-
ցաւ: Իսկ Մեծ Աղէտին բոնագաղթը, բը-
նաջնջումի եւ ջարդի նպատակով, եր-
կար ժամանակ եւ միջոցներ առաւ՝ համե-
մատաբար փոքր մաս մը բոնագաղթի են-
թարկելու համար: Կը խորհիմ որ Մանան-
դեան կ'աճապարէ միտելով թէ « Հայաս-
տանի քաղաքների բնակչութեան մեծա-
գոյն մասը կազմել են հրեաները » (էջ
200): Ասիկա հաստատող տուեալ չկայ,
բացի Փաւստոսի վկայութիւնէն: Ոչ ալ
մեզի ծանօթ է միջին դարերու խոշոր

հրեայ գաղութներու գոյութիւնը հայկա-
կան նշանաւոր առեւտրական կեդրոննե-
րուն մէջ՝ Անի, Դուին, Ջուղա, եւն.:
Կարելի է խորհիլ որ հրեայէն շատ աւելի
ճարպիկ, վտանգելի եւ աչքը բաց հայ վա-
ճառականը դժուար թէ տեղ տար հրեայ
առեւտրական գաղթականութեանց՝ հայա-
քաղաքներուն մէջ:

Արշակաւանի հիմնարկութեան եւ կոր-
ծանութիւն դալով (էջ 161-162), պէտք է
ենթադրել Փաւստոսի եւ Խորենացիի վը-
կայութիւնը, ըստ որում՝ Արշակ Բ. հրա-
մայեց բոլոր ոմրագործները եւ յանցա-
պարտները Արշակաւան փոխադրել, ուր
կրնային ազատ նկատուել հետապնդում-
ներէ: Ըստ իս՝ նման հրաման մը անըն-
դունելի է, երբ նկատի առնենք որ Արշակ
Բ. « չինեց եւս անդ ապարանս արքունի », ըստ
Փաւստոսի: Ուրեմն Արշակի հրամա-
նը քրէական, հասարակ, ոմրագործներու,
մարդասպաններու, գողերու եւ նմաններու
համար չէր, եւ Փաւստոսի ու Խորենացիի
յիշած ամէն տեսակ ոմրագործներն ու
յանցաւորները որոշ տեսակի մը կը պատ-
կանէին, այսինքն՝ ընչազուրկ, ճորտ,
կարճադատ մարդոց, որոնք զգուհ իրենց
ենթակայ շրջաններուն աւատապետու-
թիւններէն եւ նախարարներէն, փախչե-
լով՝ Արշակաւանի մէջ ապաստան կը գտ-
նէին, եւ հաւանաբար տեղ ու իրաւունք՝
տուն շինելու, օգնութիւն պետական գան-
ձէն: Արշակ Բ. իրմէ առաջ եւ իրմէ վերջ
եկող Արշակունիներուն պէս մեծ ճիւղ թա-
փեց կեդրոնական ուժեղ կառավարութիւն
մը հիմնելու, որուն ընդդիմացաւ մեր նա-
խարարական կազմը եւ հետզհետէ զօրա-
ցող եկեղեցական կազմակերպութիւնը:
Արշակաւանի հիմնարկութիւնը ծրագիր
մըն էր նախարարութիւններէ անկախ հա-
մայնքներ ստեղծելու, որոնք հաւատարիմ
եւ նեցուկ ըլլային արքունի գերագոյն իշ-
խանութեան: Ասիկա թէ՛ պիտի ջլատէր
նախարարական ընդդիմադիր ոյժը եւ թէ
Ժողովրդական ոյժ պիտի տար կեդրոնա-
ցեալ արքունի իշխանութեան: Ասիկա լաւ
դրալով նախարարութիւնները՝ աջակցու-

Թեամբ եկեղեցական վեհապետութեան՝ իրենց կեդրոնախոյս մտադրութեան համար յարձակեցան Արշակունի վրայ, Խորենացիի պատմութեան համաձայն: Սակայն կրնայ ըլլալ որ նախարարները չյանդէին բացէիբաց ըմբոստանալ արքունի իշխանութեան, եւ Արշակունիի կործանման գլխաւոր պատճառը ըլլար անհղ երկրաշարժը, որ Փոքր Ասիան ցնցեց 358 Օգոստոս 24ին:

Մանանդեան (էջ 257-9) ընդունելով հանդերձ նախամարտական հայ դրականութեան գոյութիւնը, այնուհանդերձ տեսութիւններ կ'արտայայտէ այդ մասին, որոնք սակայն կարելի է հերքել: Սակայն մեր այս գրախօսականին նեղ սահմանները թոյլ չեն տար այդ մասին հոս ծանրանալ: Թող միայն ներուի ինծի հոս ըսելու որ ես ինքս ալ կ'ընդունիմ թէ նախամարտական հայ դրականութեան համար դործածուած գիրը, բնական է, չէր կարելի համեմատել կատարելութեան Մարտոպեան գրին:

Մանանդեան, (էջ 286), Շահապիվանի ժողովին թուականը կը նշանակէ 443, որ պատմական տուեալներով ընդունելի չի կրնար ըլլալ: (Տես իմ Վասակ Սիւնի եւ Շահապիվանի ժողովը, «Հայրենիք» ամսագրին մէջ): Շահապիվանի ժողովը տեղի ունեցած է 445-6 թուականին. այդ մասին կասկած չի կրնար ըլլալ:

Արդարեւ հայ նախարարութեանց նեղմիտ հաշիւները՝ Արշակունիները հայ դահէն հեռացնելու՝ սխալ դուրս եկաւ: Սասանեանք շարունակեցին նախարարական կեդրոնախոյս պետականութեան գէժ՝ Արշակունեաց կեդրոնացեալ վարչաձեւը ստիպել: Սակայն այս անգամ փոխանակ Հայ Արշակունիի կեդրոնացումի՝ բոլորովին խոտելի Սասանեան կեդրոնացում, եւ թէ կարելի ըլլար՝ հայ անկախութեան բոլորովին ջնջում եւ պարսից մէջ ձուլում նւազատակելու ունենալով: Այս վտանգին գէժ էր որ պայքարեցաւ Կորիւնի իսկ խօսքով՝ «յառաջիմացն» Վասակ Սիւնի, առաջին հայ մարզպանը:

Մանանդեանի ժամանակագրութիւնը հոս կ'աւարտի: Ասկէ վերջ ան կու տայ տարբեր գլուխներով Արշակունեաց ժամանակ Հայաստանի սահմանները, այդ ժամանակ հայ աւատականութեան յարաբերութիւնները, ճշդում հայ ազատ եւ ուտանիկ դասակարգերու եւ անոնց յարաբերութիւնը մեր եկեղեցականութեան հետ, Ռամիկներ, Շիմակներ եւն.: Շահեկան գլուխ է 19րդ գլուխը, «Առեւտուրը, քաղաքները, արհեստարարները եւ ստրուկները»: Էջ 388 պէտք է յիշէր, որ Չինաստանէն հայ առեւտրականներու մինչեւ Հոռոմ ներմուծած ապրանքներու շարքին հոռոմ եւ դործուած մետաքսէ զատ՝ մեծ տեղ կը բռնէր ձէյտ (թանկազին քար մը) եւ Լայքա (կարմրախէթ մը, որմէ կը պատրաստուէր չիկափով), եւ թէ հայ առեւտրականներու չինական սահմաններու մէջ գործելը պաշտօնապէս կը յիշուի նախ քան Քրիստոս 124 թուին: Մանանդեան խօսելով քաղաքներու մասին, թէ եւ վ'ընդունի որ այդ աստիճանները քաղաքները աւելի ամրացեալ տեղեր էին, եւ որով ինք ակնկալելու չէր այն գոյալիճակը որ քաղաքները կը ներկայացնէին Բաղրատունեաց եւ անկէ վերջի ժամանակ: Ասոր համար քաղաքները աւելի զինուորական կեդրոններ էին, ճանապարհի, մաքսային եւ ամբողջութեամբ զուրս կարաւաններու իջեւանատեղիներ, վաճառանոցներ: Մանանդեան կը խորհի որ քաղաքներու բընակչութիւնը Արշակունեաց շրջանին գլխաւորաբար օտար բնակչութիւն էր, մասնաւորաբար սեմական ծագումով (հրեայ, ասորի, նեստորական): Ասով ան ինքնիւրեն կը հակասէ: Եթէ քաղաքները ամրացեալ վայրեր էին երկրին զինուորական կարիքներուն համար, խիստ անհաւանական պիտի ըլլար որ օտար բնակչութիւն ունենային: Գալով օտար բնակչութեանց խոշոր զանգուածներու Հայաստանի մէջ գոյութեան իր կարծիքն իսկ անընդունելի է եւ խիստ աղարկելի: Եթէ շուկայի եւ առեւտրական բառամթերքը հայ լեզուին մէջ սեմական ծագում ունի, ատիկա կըր-

նար կատարուիլ առեւտրական յարաբերութեամբ, առանց նոյնիսկ Հայաստանի մէջ սեմական մեծ կամ փոքր գաղութներու գոյութեան կարիքին: Իսկ Մանանդեանի այն կարծիքը, թէ լինչո՞ւ մեր պատմութեան մէջ հայ առեւտրականներ եւ արհեստաւորներ չեն յիշուիր, պէտք է բացատրել անով որ հայ առեւտրական դասակարգը ազատներու, չինականներու եւ այլնի նման խոշոր զանգուած մը չէր, այլ համեմատաբար խիստ փոքր զանգուած մը, հաւանաբար մեծ մասամբ երկրէն դուրս շուկաներու մէջ, Հոռոմէն մինչեւ Չինաստան, իսկ երկրին մէջ միայն քանի մը առեւտրական հանգրուաններու մէջ, գուրկ իբր զանգուած մը նշանակութիւն ունենալէ, նոյն աստիճանի կարելի է ըսել բոլորովին մեծաշնորհալ եւ գուցէ ինքնավար ներքին կազմութեամբ: Իսկ արհեստաւորները՝ վրնային գտնուիլ այս կամ այն ծանօթ դասակարգերուն մէջ Արշակունեաց ժամանակ, ըլլան չինական, ազատ, կարճադատ, եւ այլն, որոնք գիւղերու, աւաններու եւ նման կեդրոններու մէջ կրնային արտադրել հայունակ ձեռարուեստի նիւթեր, որոնք հաւաքուելով

կ'արտածուէին դուրս: Ուրեմն արհեստաւորներու դասակարգ մը, ինչպէս որ այսօր կ'ըմբռնենք, հաւանաբար գոյութիւն չունէր Արշակունեաց ժամանակ: Հայ գիւղացին՝ մինչեւ մեր օրերը գիւղացի դասակարգին մէջ մնալով՝ արհեստաւոր ալ է երբ դաշտային կամ գիւղական գործերէն կ'ազատի, եւ ժամանակ ունի գորդ կամ հիւսուածեղէն գործելու, երկաթ, փայտ, կաւ կամ պղինձ իրեր պատրաստելու: Բաղրատունեաց աստիճան արդէն հարցը կը փոխուի եւ հայ արհեստաւորներու դատ դասակարգ մը գոյութիւն կ'առնէ ու կը ճանչցուի իբր այդ, ունենալով առանձին զօրաւոր վազմակերպութիւն:

Հատորին վերջին մասը, էջ 411էն սկըսեալ, մանրամասն մատենագիտական եւ այլն ցանկեր ու ամփոփումներ են, ինչպէս նաեւ ժամանակագրական ցանկ եւ անուանացանկ:

Արժէքաւոր եւ մեծապէս գնահատելի դործ մըն է Մանանդեանի այս հատորը, խոշոր նպաստ մը քննական մեր պատմութեան վերաբերմամբ:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ